# Ճուտիկը

891.71Մ
Գ-88



1935

Լինում է, չի լինում, աշխարհում մի պստլիկ ճուտիկ։
Այ, այսպիսի ճուտիկ։

Բայց նա կարծում եր, թե ինքը մեծ, շատ մեծ ե։ Յեվ յերբ ման եր գալիս բակում, ուռչում եր, գլուխը բարձր պահում
Այ, այսպես։



23 MAY 2011

Ճուտիկը մայրիկ ուներ։ Անունը Չալիկ,
սև ու չաղլիկ։
Այ, այսպիսի մայրիկ։



17 JUL 2013
4650

Զայիկը ճուտիկին շատ էր սիրում։
Նրան կերակրում էր որդերով։
Ա՛յ, այսպիսի որդերով։



Մի անգամ Զայիկի
վրա հարձակվեց Սևուկ
փիսիկը և քշեց նրան մին-
չև լճի ափը։

1008
37257



Ա՛յ, սա յե Սևուկ փիսիկը։

Ճուտիկը մնաց ցան-
կապատի մոտ մենակ։ Հան-
կարծ նա տեսավ, որ աք-
լորը թռավ ցանկապատի
վրա, թևերը
թափ
տվեց,
վիզը
ձգեց։

Ա՜յ,
այսպես։



Յեվ
բարձր
ձայնով գոչեց.
«Կի կլի կի՜։»
Հետո դես ուդեն նայեց. «Մի՞թե յես քաջ չեմ, մի՞թե
յես լավ չեմ»։

Այս բանը ճուտիկին շատ դուր յեկավ։
Ինքն ել վիզը ձգեց։
Ա՜յ, այսպես։



4092

Յեվ ամբողջ ուժով ծվծվաց.
«Պի-պի-պի-տի։ Յես էլ եմ քաջ, յես էլ եմ լավ»։
Բայց սայթաքեց և չլմփաց ջրով լիքը փոսը։
Այ, այսպես։





ՀՀ Ազգային գրադարան
NL0398449

Փոսի մեջ նստած եր գորտը։
Գորտը տեսավ ճուտիկին, ծիծաղեց. «Հա՛, հա՛, հա՛
հա՛, հա՛։ Այ պստլիկ, այ ճստլիկ ճուտիկ։
Դու շատ հեռու յես աքլորից»։
Այ, այսպիսի գորտ եր։

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

4650 07

К. ЧУКОВСКИЙ

**ЦЫПЛЕНОК**

ГИЗ ССР Армении